ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЕРИЯ ЦАХКАЛАНДЖ

« 26 » « 11 » 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի 22 նոյեմբերի կայացած թիվ N 8 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 11 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ /Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ/

11230-13
27 11 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

# ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2013 թվականի N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության* օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Առաքելյան Վաչագան | | | |
| 5. Ղազարյան Ալիկ | | | |

***ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** ***/Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/***

Հավանված
[illegible]
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու «22» [illegible] 20[illegible]8թ..
N1 որոշման

1. Օրակարգի հաստատում:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

2. Ծաղկալանջի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

3. Ծաղկալանջի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը ,աշխատակիցների թվաքանակը , պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

4. Ծաղկալանջ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

Աշխատակազմի քարտուղար՝ _______ / Ս. Սենիքերիմյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2013 թվականի N 2 - Ն

## ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

**որոշում է՝**

1. Սահմանել համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Ղազարյան Ալիկ | | | |
| 4. Պողոսյան Մխիթար | | | |
| 5. Առաքելյան Վաչագան | | | |

*ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* */Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/*

2013 թվականի
նոյեմբերի 22
գ. Ծաղկալանջ

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու «22» նոյեմբերի 2013 թ.
N-2 Ն որոշման

«1.»Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի շինարարությունների ( ներառյալ` ոչ հիմնական ) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար

«1) »մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական ( ամառանոցային ) տների ,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ՝ հինգ հազար դրամ .մինչև 7500դրամ:

«2) ».սույն կետի «1) »ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

«ա.) »/201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տաս հազար դրամ.մինչև 15000

«բ.) »/501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տասնհինգ հազար դրամ.մինչև 25000

«գ.) »/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝քսան հազար դրամ.մինչև 35000

Ոչ հիմնական օբյեկտների տեղադրման համար՝

«3) ».մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մեկ հազար դրամ.մինչև 1500

«3) ». 20 և ավելի քառակուսի. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար հինգ հարյուր դրամ.մինչև 2500

«2.»Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման ,վերականգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության

թույլտվություն չպահանջող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

«1)»չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ դեպքում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.մինչև 1500 դրամ

բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման,վերականգման կամ արդիականացման . աշխատանքներից . նախատեսվում է նաև կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ դեպքում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի «1)»ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

«3) »նախատեսվում է միայն կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ դեպքում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ,ապա այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

«3.»Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հազար դրամ.մինչև 2500 դրամ:

«4.» Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

«1)»Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ .0-ից 17500 դրամ:

«2)»ծխախոտի արտադրանքի, վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ .1500-ից 17500 դրամ:

«5.» Համայնքի տարածքում՝

«1)»բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.350 դրամ
«2)»Հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.150000-200000 դրամ
«6.» Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ. 50000 դրամ:
«7.» Համայնքի տարածքում՝ առևտրի,հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24 $^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
«1)»առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.25000դրամ
«2)»հանրային սննդի և՛ զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.50000 - 100000 դրամ
«3)» բաղնիքների ( սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.200000-500000 դրամ
«4)»խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.500000-1000000 դրամ
«5)»շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար.250000-500000 դրամ
«6)» վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ.100000-150000 դրամ
«8.»Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է ՝
«1)»ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ. 1000-2000 դրամ
«2)»թունդ ալկահոլային ( սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ. 2500-3500 դրամ

«3)»ցայլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.500-1500դրամ

«4)»դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ.700 դրամ

«9.»Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար դրամ.0-1000 դրամ

«10.»Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.0-1500 դրամ

«11.»Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեք հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ [signature] / Ս. Սենիքերիմյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

# ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2013 թվականի N 3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Առաքելյան Վաչագան | | | |
| 5. Ղազարյան Ալիկ | | | |

*ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* */Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/*

Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու «22» նոյեմբերի 2013թ.
N-3 որոշման

## ԾԱՂԿԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը -7
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | դրույքը | 2014 թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 175.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 126.0 |
| | *Աշխատակազմ* | | | |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1.2—1 | 1 | 123.0 |
| 4 | Առաջատար մասնագետ | 3.1—1 | 1 | 120.0 |
| 5 | 1-ին կարգի մասնագետ | 3.2—1 | 1 | 103.0 |
| | ***Տեխնիկական սպասարկման անձնակազմ*** | | | |
| 6 | վարորդ | | 1 | 68.0 |
| 7 | Պահակ | | 1 | 74.0 |
| 10. | Ընդամենը | | 1 | 789.0 |

## ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը - 4
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | դրույքը | 2014.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Մշակույթի տան տնօրեն | | 1 | 74.0 |
| 2 | Հավաքարար | | 1 | 63.0 |
| 3 | Գրադարանավարուհի | | 1 | 64.0 |
| 4 | Պահակ | | 1 | 59.5 |
| 5 | Պահակ | | 1 | 74.0 |
| | Ընդամենը | | | 334.5 |

Աշխատակազմի քարտուղար /Ս. Սեմիքերիմյան /

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 նոյեմբերի 2013 թվականի N 4

## ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի հինգերորդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

որոշում է՝

1. Ծաղկալանջի գյուղական համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին ֆինանսական օգնություն հատկացնել՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | կողմ (ստոր.) | դեմ (ստոր.) | ձեռնպահ (ստոր.) |
|---|---|---|---|
| 1. Երվանդյան Երվանդ | | | |
| 2. Դավթյան Գևորգ | | | |
| 3. Պողոսյան Մխիթար | | | |
| 4. Առաքելյան Վաչագան | | | |
| 5. Ղազարյան Ալիկ | | | |

*ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *(Մ. ՄԿՐՏՉՅԱՆ)*

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու « 22 » նոյեմբերի 2013թ.
N-4 որոշման

# ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ/ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՑՈՒՑԱԿ

| | |
|---|---|
| 1. Գուրջանյան Յուրի | 20.000 դրամ |
| 2. Վարդանյան Վանիկ | 20.000 դրամ |
| 3. Հարությունյան Մնացական | 20.000 դրամ |
| 4. Ասատրյան Կառլեն | 20.000 դրամ |
| 5. Գաբրիելյան Ռազմիկ | 20.000 դրամ |
| 6. Բրոյան Ֆրյազ | 25.000 դրամ |
| 7. Պետրոսյան Ալբերտ | 20.000 դրամ |
| 8. Պետրոսյան Զարդար | 20.000 դրամ |
| 9. Նավասարդյան Անուշավան | 20.000 դրամ |
| 10.Մալխասյան Վարդան | 20.000 դրամ |
| 11.Սահարյան Ռոբերտ | 20.000 դրամ |
| 12.Հովակիմյան Սերյոժա | 25.000 դրամ |
| 13.Երվանդյան Սարգիս | 25.000 դրամ |
| 14.Մելքումյան Արտյոմ | 25.000 դրամ |
| 15.Ստեփանյան Ստեփան | 30.000 դրամ |
| 16.Ծեկիկյան Եփրեմ | 30.000 դրամ |
| 17.Թորոսյան Անահիտ | 50.000 դրամ |
| 18.Սարգսյան Գրիգոր | 20.000 դրամ |
| 19.Գրիգորյան Վալոդյա | 20.000 դրամ |

Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սեռիքերիմյան /